«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

18 նոյեմբերի, 2022 թ. N 30-L

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կարգապահական հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2022թ. նոյեմբերի 18-ի N 30-L որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2023թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Կարգապահական հանձնաժողովի (այսուհետ՝ Կարգապահական հանձնաժողով) 2023թ. տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է՝ ի կատարումն Կարգապահական հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել ինչպես Կարգապահական հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը, այնպես էլ՝ Պալատի խորհրդի կողմից Կարգապահական հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Գործունեության ծրագրով նախատեսվող միջոցառումների անցկացումն ու աշխատանքների կատարումը պլանավորվել է՝ ելնելով Կարգապահական հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված գործառույթներից և դրանց բնույթից, մասնավորապես՝

- Պալատի որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի կողմից իրականացրած՝ արտաքին գնահատման արդյունքների ուսումնասիրություն և առաջարկվող գնահատականի վերաբերյալ դիրքորոշման ձևավորում.
- Պալատի անդամների կողմից մատուցվող հաշվապահական և աուդիտորական ծառայությունների շրջանակներում և դրանց հետ կապված գործողությունների (անգործության) վերաբերյալ ստացված բողոքների քննում.
- Պալատի անդամակցության հանձնաժողովի կողմից իրականացրած՝ Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքների դիտարկման հիման վրա Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացում.
- Պալատի կանոնադրությամբ և Պալատի ընդհանուր ժողովի կողմից հաստատված կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման կարգով նախատեսված դեպքերում Պալատի ընդհանուր ժողովի և (կամ) Պալատի խորհրդի կողմից կայացված որոշումների և (կամ) հանձնարարությունների կատարում:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

հ/հ	**Գործառույթ**	**Միջոցառում/աշխատանք**	**Նախատեսվող ժամկետ**
1.	Պալատի որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի կողմից իրականացրած արտաքին գնահատման արդյունքների՝	1.1. ուսումնասիրություն	Պարբերաբար՝ գնահատման արդյունքների ստացումից հետո 5 օրյա ժամկետում
		1.2. գնահատման արդյունքների հիման վրա առաջարկվող գնահատականի	Պարբերաբար՝ գնահատման արդյունքների ուսումնասիրումից

		վերաբերյալ դիրքորոշման ձևավորում	հետո 3 օրյա ժամկետում
		1.3. Պալատի խորհրդին ներկայացում	Պարբերաբար՝ գնահատականի վերաբերյալ դիրքորոշման ձևավորումից հետո 3 օրյա ժամկետում
2.	Պալատի անդամների կողմից մատուցվող հաշվապահական և աուդիտորական ծառայությունների շրջանակներում և դրանց հետ կապված գործողությունների (անգործության) վերաբերյալ ստացված բողոքների՝	2.1. քննում	Պարբերաբար՝ բողոքների ստացումից հետո 10 օրյա ժամկետում
		2.2. կարգապահական միջոցների կիրառման վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացում	Պարբերաբար՝ բողոքների քննումից հետո 3 օրյա ժամկետում
3.	Պալատի Անդամակցության հանձնաժողովի կողմից իրականացրած՝ Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքների՝	3.1. դիտարկում	Պարբերաբար՝ արդյունքների ստացումից հետո 5 օրյա ժամկետում
		3.2. դիտարկման հիման վրա Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ Պալատի խորհրդին առաջարկությունների ներկայացում	Պարբերաբար՝ արդյունքների դիտարկումից հետո 3 օրյա ժամկետում
4.	Պալատի որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի հետ համատեղ Պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպությունների (այսուհետ՝ Պալատի կորպորատիվ անդամների) ներկայացուցիչների հետ	Պալատի որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի հետ համատեղ (ըստ ցանկության նաև՝ Պալատի խորհրդի անդամների մասնակցությամբ) Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումների անցկացում՝ որակի արտաքին	2023թ. մարտ

	առաջին հանդիպում-քննարկման անցկացում	գնահատման գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ իրազեկման նպատակով	
5.	Պալատի որակի պահանջ-ների պահպանման գնա-հատման հանձնաժողովի հետ համատեղ Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ *երկրորդ* հանդիպում-քննարկման անցկացում	Պալատի որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի հետ համատեղ (ըստ ցանկության նաև՝ Պալատի խորհրդի անդամների մասնակցությամբ) Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումների անցկացում՝ որակի արտաքին գնահատման գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ իրազեկման նպատակով	2023թ. օգոստոս
6.	Պալատի որակի պահանջ-ների պահպանման գնա-հատման հանձնաժողովի հետ համատեղ Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ *երրորդ* հանդիպում-քննարկման անցկացում	Պալատի որակի պահանջների պահպանման գնահատման հանձնաժողովի հետ համատեղ (ըստ ցանկության նաև՝ Պալատի խորհրդի անդամների մասնակցությամբ) Պալատի կորպորատիվ անդամների ներկայացուցիչների հետ հանդիպում-քննարկումների անցկացում՝ որակի արտաքին գնահատման գործընթացի ընթացիկ վիճակի վերաբերյալ իրազեկման նպատակով	2023թ. դեկտեմբեր
7.	Պալատի կանոնադրու-թյամբ և Պալատի ընդհա-նուր ժողովի կողմից հաստատված կարգապա-հական պատասխա-նատվության միջոցների կիրառման կարգով նախա-տեսված դեպքերում Պալատի ընդհանուր ժողովի և (կամ) Պալատի խորհրդի կողմից կայացված որոշումների և (կամ)	Միջոցառումներ՝ ըստ անհրաժեշտության	2023թ. հունվար-դեկտեմբեր

	հանձնարարությունների կատարում		

Կարգապահական
հանձնաժողովի նախագահ՝ **Դ. Անանյան**